

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱԼԻՍԱ ԷՄԻԼԻ

ԲՆԱԿԱՆ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Ժ. 02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Դ., պրոֆ. Յու. Գաբրիելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Դ., պրոֆ. Ա. Հովհաննիսյան
Բ.Գ.Ք., դոց. Ա. Չուբարյան


Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան
պետական լեզվաբանական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի 13-ին, ժամը 12:00-ին, ՀՀ ԲՈՅ-ի՝ ԵՊՀ-ում գործող 009 «Գերմանական լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. նոյեմբերի 12-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
Բ.Գ.Դ., պրոֆեսոր՝



Ե.Լ. Երզնկյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ժամանակակից անգլերենի ձևաբանական յուրահատկությունների վերաբերյալ այսօր գոյություն ունեն բազմաթիվ ու բազմաբնույթ աշխատություններ և կարծես այս ոլորտում չպարզաբանված քիչ խնդիրներ կան: Մինչդեռ արդի լեզվաբանական գիտության զարգացման պայմաններում ակնհայտ է մի շարք ավանդական դրույթների ու սկզբունքների վերանայման, վերագնահատման և բազմակողմանի հիմնավորման անհրաժեշտությունը: Այդ առումով ուշադրության են արժանի նախորդ դարի 70-ական թվերին ձևավորված, այսպես կոչված, «բնական լեզվաբանության» և արդի տիպաբանության հիմնադրույթներն ու հետազոտական մեթոդները, որոնցում կարևոր տեղ են զբաղեցնում լեզուների ձևաբանական խնդիրները: Ընդհանուր առմամբ, ի տարբերություն ավանդական լեզվաբանական հետազոտությունների, որտեղ լեզուների ձևաբանական կազմությունները քննարկվում են հիմնականում կայական վիճակում, այս ուղղությունները նախընտրում են դիտարկել դրանք առավել «բնական» վիճակում՝ իրենց շարժման ու փոխադարձ կապերի մեջ: Այդ դեպքում ի հայտ են գալիս նշված կազմությունների այնպիսի յուրահատկություններ, որոնց ուսումնասիրության համար նույնիսկ մի քանի գիտակարգերի և միջգիտակարգերի սկզբունքների ու դրույթների գործադրումը բավարար չէ այդ յուրահատկությունները լիարժեք բացահայտելու, դասակարգելու և մեկնաբանելու համար: Այդ առումով, տիպաբանությունն այն բնագավառն է, որն ի գործ է առավելագույն չափով ընգրկել այն հիմնական խնդիրները, որոնք վերաբերում են լեզվի ձևաբանական առանձնահատկություններին: Անժխտելի է նաև ժամանակակից մասնավոր տիպաբանության բացատրական ուժը, որը կոնկրետ լեզվի սահմաններում իրականացնում է առանձին լեզվական երևույթների էական յուրահատկությունների ընդհանրացում՝ հիմնվելով ժամանակակից ճանաչողական, գործաբանական, հոգելեզվաբանական, իսկ վերջին տարիներին նաև՝ բնական լեզվաբանական սկզբունքների ու դրույթների վրա: Նման մոտեցմամբ նախ հաղթահարվում է ավանդական կառուցվածքային լեզվաբանության մի շարք դրույթների հակասականությունը և ապա՝ կարևոր դեր է հատկացվում առանձին լեզուների (տվյալ դեպքում՝ անգլերենի) ներլեզվական միտումների բացահայտմանը, որոնք կարող են ընդհանրացվել ինչպես հիշյալ միջգիտակարգային, այնպես էլ այլ լեզուների առանձին փաստերի օգնությամբ: Այդպիսով, քննարկվող լեզվական իրողությունների նկատմամբ ցուցաբերվում է համակողմանի մոտեցում, որն իրականացվում է ինչպես բուն լեզվաբանական, այնպես էլ բնագիտական և միջգիտակարգային մեթոդներով ու սկզբունքներով: Այդ առումով յուրահատուկ նշանակություն է ձեռք բերում հիշյալ բնական լեզվաբանությունը, որը յուրատեսակ կամուրջ է ստեղծում լեզվաբանական տարբեր գիտակարգերի և միջգիտակարգերի միջև, որոնց թվում է նաև արդի տիպաբանությունը: Այսօր այն հայտնի է Ամերիկայում ու Եվրոպայում և լայնորեն գործադրվում է լեզուների ուսումնասիրության տարբեր բնագավառներում: Ասվածը վերաբերում է նաև ժամանակակից անգլերենի մի շարք ձևաբանական առանձնահատկությունների քննությանը, որտեղ բնական լեզվաբանության հիմնադրույթների ներմուծմամբ, կարծում ենք, կարելի է ձեռք բերել առավել ճշգրիտ արդյունքներ:

Թեմայի արդիականությունը: Սույն աշխատանքի բեման արդիական է այն առումով, որ ժամանակակից անգլերենի կառուցվածքային և գործառական խնդիրներն առավել արդյունավետ կարելի է քննարկել մասնավոր տիպաբանության դիրքերից, քանի որ այդպիսով ձեռք բերված փաստերի օգնությամբ հնարավոր է կատարել ավելի հստակ ընդհանրացումներ ու եզրահանգումներ: Վերջիններս իրենց հերթին ենթադրում են նշված փաստերի խորքային առանձնահատկությունների վերլուծություն, որը կարող է իրականացվել ինչպես ներլեզվական միտումների բացահայտման, ճանաչողական ու գործաբանական փաստերի ներդրման, այնպես էլ այլ լեզուների հետ նման կամ նույնական երևույթների հետ զուգադրման ճանապարհով: Ասվածն ամբողջովին վերաբերում է նաև անգլերենի ձևաբանական կաղապարներին, որոնք աշխատանքում քննարկվում են բնական ձևաբանության դրույթների հիման վրա:

Ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել անգլերենի այն ձևաբանական կազմությունները, որոնք ավանդական լեզվաբանության տարբեր ուղղությունների կողմից միանշանակ չեն մեկնաբանվում և խորքային ուսումնասիրության կարիք ունեն:

Ասվածը փորձ է արվում իրականացնել հետևյալ խնդիրների պարզաբանմամբ.

- հնարավորինս ամբողջական ներկայացնել լեզուների ուսումնասիրության մեջ բնականության տեսության հիմնադրույթներն ընդհանրապես և բնական ձևաբանական կաղապարների ըմբռնումը՝ մասնավորապես,
- բնականության սկզբունքներով քննարկել անգլերենում ձևաիմաստային կաղապարների տիպաբանական յուրահատկությունները՝ էլեմենտով նշանագիտական, գործաբանական և ճանաչողական տեսություններից,
- վեր հանել անգլերենի բնական ձևաբանական կաղապարների կազմության և գործառույթի յուրահատկությունները,
- կատարել անգլերենի ձևաբանական երևույթների քննություն՝ լեզվական այլ մակարդակների միավորների հետ փոխհարաբերությունների հաշվառմամբ:

Գիտական նորույթ: Ուսումնասիրության մեջ առաջին անգամ փորձ է արվում մի կողմից բնական լեզվաբանության դիրքերից վեր հանել անգլերենի ձևաբանական կազմությունների բնութագրական գծերը և մյուս կողմից տիպաբանական քննության ենթարկել նշված կազմությունները՝ ներկայացնելով դրանց բնական ձևաբանական կաղապարավորման սկզբունքներն ու մեթոդները: Ընդ որում, եթե մինչ այժմ համապատասխան գրականության մեջ անգլերենի որոշ ձևաբանական կառուցվածքների քննություն բնական մոտեցմամբ, այնուամենայնիվ, իրականացվել է, ապա հիմնական նպատակը եղել է ընդամենը բնական լեզվաբանության հիմնադրույթների պարզաբանումը, իսկ անգլերենի ձևաբանության յուրահատկություններին ու նրանց համապատասխան կաղապարավորման խնդիրներին անդրադարձ չի կատարվել: Բացի այդ, բնական ձևաբանության հիմնադրույթների վերաբերյալ տեսակետներում այսօր դեռ միասնականություն գոյություն չունի և այստեղ անգլերենի նյութի հիման վրա փորձ է արվում նաև իրականացնել նրա որոշ սկզբունքների միասնականացում, ինչը նույնպես աշխատանքում առանձին նորույթ է բերում և ունի նաև ընդհանուր լեզվաբանական նշանակություն:

Առաջադրված խնդիրները բնկվում են ընդհանուր համեմատությունների, գուգադրական, բաշխումային, կառուցվածքային և լեզվական կաղապարավորման մեթոդներով: Առանձին դեպքերում գործադրվում են նաև փաստական նյութի ըստ բնականության սկզբունքների գնահատման, վերլուծության և դասակարգման տարբեր դրույթներ, փորձ է արվում նաև ներկայացնել դրանց միասնական մեթոդական հիմքերը:

Ուսումնասիրության տեսական և գործնական արժեքը: Տեսական առումով սույն հետազոտությունը կարող է նպաստել անգլերենի ձևաբանության ոլորտին առնչվող տեսական խնդիրների նորովի լուսաբանմանը, ելնելով բնական լեզվաբանության և արդի տիպաբանության հիմնադրույթներից ու սկզբունքներից: Գործնական առումով այստեղ ձեռք բերված արդյունքները կարող են գործադրվել ինչպես անգլերենի գործնական ուսուցման մեջ, այնպես էլ ստուգաբանական, թարգմանական և այլ բնույթի աշխատանքներում:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, ընդհանուր եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլխում ներկայացվում են լեզվի բնականության տեսության և արդի տիպաբանության հիմնադրույթները, վեր է հանվում դրանց էությունն ու փոխհարաբերությունը ժամանակակից այլ լեզվաբանական գիտակարգերի և միջգիտակարգերի հետ:

Լեզվի բնականության տեսությունը կամ, ինչպես այսօր անվանվում է «բնական լեզվաբանությունը», զարգացել է ավանդական կառուցվածքային լեզվաբանության հիմնադրույթների վրա՝ վերանայելով վերջինիս մի շարք առանցքային սկզբունքներ ու մոտեցումներ: Այս ուղղության հիմնադիր կարելի է համարել ամերիկացի լեզվաբան Գ. Ստենպին, որն իր «The Acquisition of Phonetic Representations» հոդվածում առաջին անգամ խոսում է «բնական հնչույթաբանության» (Natural Phonology), նրա էության և հիմնախնդիրների մասին: Այդպիսով մա առաջարկում է մի տեսություն, որի օգնությամբ պետք է նկարագրվեն լեզուների միայն «իրական» կամ «բնական» միավորները, որոնք էականորեն տարբերվում են «արհեստականներից»: Այդ նպատակով մա վերցնում է Պրագայի լեզվաբանական դպրոցի կողմից ձևաբանության մեջ ընդունված «նշույթավորում» և «ոչ նշույթավորում» հասկացությունները, որտեղ նշույթավորված (կամ «ոչ բնական») է համարում լեզվի նվազ գործառական հաճախականությամբ, իսկ ոչ նշույթավորված (կամ «բնական») բարձր գործառական հաճախականությամբ բնորոշվող տարրերը: Նրա կարծիքով, հնչույթաբանական գործընթացները «մտավոր փոխարկումներ» են, որոնք կանոնավորապես, բայց ենթագիտակցաբար, մեր հնչյունաբանական մտադրությունները համապատասխանեցնում են մեր հնչյունական կարողություններին, որի արդյունքում առաջանում են «իրական» կամ «բնական» միավորները¹:

Անդրադառնալով ավանդական լեզվաբանական ուղղությունների համար ընդհանուր խնդիրներին, կարելի է ասել, որ դրանցում առաջնային նշանակություն ունի լեզ-

¹ Stampe D., The acquisition of phonetic representations, papers from the 5th Regional Meeting, Chicago Linguistic Society, 1969.

վի ուսումնասիրության հայեցակերպի ընտրության հարցը: Տիպաբանական հայեցակերպ համարվող ախրոնիան (ապաժամանակայնությունը) կտրելով լեզուն ժամանակից, կտրում է նաև երևույթների պատճառահետևանքային կապերը: Այդ առումով նշենք, որ արդի տիպաբանությունը լեզվական իրողությունների մեկնաբանման «ինչպե՞ս» ընդհանուր հարցադրումը փոխարինում է «ինչու՞» հարցադրմամբ: Կառուցվածքային տարբեր դարձումների ներկայացուցիչներ Լ. Ելմսելվը, Ա. Մարտինեն և հատկապես Ռ. Յակոբսոնը առաջարկեցին, այսպես կոչված «շարժուն դիախտոնիա» և այդ նպատակով գործածեցին Ֆ. Սոսյորի կողմից առաջարկված «պանխրոնիա» (հարաժամանակայնություն) հասկացությունը, որը Սոսյորը նույնացնում էր ախրոնիայի հետ: Հետագայում բնական լեզվաբանության հետևորդներից Ջ. Հայմանը և ապա նաև մյուսներն ընդունեցին նոր մեկնաբանմամբ պանխրոնիան (հարաժամանակայնությունը), որպես բնական լեզվաբանության հիմնական հայեցակերպ:

Իսկ ի՞նչ է բնականությունն ընդհանրապես: Ումանք կարծում են, որ որպես «բնական» հասկացության հակադիր եզր ենթադրվում է «արհեստական» լեզուն: Դ. Ստենսլի մեկնաբանության հիմքում լեզվական միավորների առավել կամ նվազ գործառական հաճախականության սահմանումն է, որն իսկապես լիարժեք չէ, եթե նկատի ունենանք, որ նվազ գործառական հաճախականությամբ տարրերը նույնպես բնական լեզվի էությունն են արտացոլում: Ֆ. Գոտտերը «բնական» հասկացությունը համադրում է բնագիտության մեջ հանդիպող «բնական երևույթ», «բնական գործողություն», ինչպես նաև, օրինակ, կենսաբանության մեջ գործածվող, «արյան բնական շրջանառություն» և բնական է համարում իրերի և երևույթների էությունից բխող հատկանիշները: Յ. Գաբրիելյանը լեզվի բնականությունը բացատրում է նրա ոչ համակարգային հատկանիշի հիման վրա, գտնելով, որ բոլոր բնական համակարգերն (այդ թվում նաև լեզվականը) ունեն «ուժեղ» կամ ոչ նշույթավորված և «թույլ» կամ նշույթավորված տարրեր, որոնց փոխադրությամբ էլ գոյատևում է համապատասխան համակարգը: Համակարգի ուժեղ տարրերը նա համարում է բնական, քանի որ դրանք գտնվում են հարաբերականորեն կայուն վիճակում և տեսանելի են նրանց բոլոր հատկանիշները, իսկ թույլ տարրերի դեպքում (որոնք մշտապես ձգտում են ուժեղացման) այդ հատկանիշները դեռ աղոտ են, քանի որ դեռ կայունացած չեն²:

Կցանկանալիք նաև ճշտել լեզվի բնորոշ և բնական յուրահատկությունների փոխհարաբերությունը: Այսպես, օրինակ, անգլերենի հոգնակի թվի կազմությանը բնորոշ է, բացի s-ով ձևերից, զրո վերջավորությամբ ձևերի առկայությունը, ինչպես՝ sheep-sheep, goose-geese և այլն: Այս դեպքում ունենք անգլերենի նշույթավորված կամ ոչ բնական կառույցներ, քանի որ դրանք իրենց գործառական հաճախականությամբ զիջում են s-ով ձևերին: Մյուս կողմից, սակայն, նշված ձևերը անգլերենին բնորոշ կառույցներ են և բխում են նրա համակարգային առանձնահատկություններից: Ուստի «նշույթավորված» և «ոչ նշույթավորված» երևույթները տարբերվում են «բնորոշ» և «ոչ բնորոշ» հատկանիշներից, քանի որ վերջինները բնութագրում են միայն կոնկրետ համակարգի առանձնահատկությունը, իսկ առաջինները՝ լեզվի համակարգից անկախ տիպաբանական բնութագիրը: Նշույթավորվածության հատկանիշն իրականացվում է

² Գաբրիելյան Յ., Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Եր. 2001, էջ 92:

տարբեր աստիճաններով, որն արդեն կարելի է մեկնաբանել որպես թե՛ համակարգա-
յին և թե՛ ոչ համակարգային տիպաբանական առանձնահատկություն:

Լեզուների բնական հատկանիշների սահմանման տեսակետից Վ. Մայերթալերը
«նշույթավորում» և «ոչ նշույթավորում» նշանակությունների համար կարևոր է համա-
րում ձևաբանական կազմությունների պատճառաբանվածությունը ոչ միայն ձևի ու բո-
վանդակության փոխհարաբերության, այլև կառուցվածքի տեսակետից, ինչպես, օրի-
նակ, գերմաներենում մասնագիտություն ցույց տվող բառերում -er բաղադրիչի առ-
կայությունը (Fahr-er, Lehr-er և այլն): Ճշտելով մաս «բնորոշ» և «ոչ բնորոշ» հաս-
կացությունների նշանակությունը, նա գտնում է, որ եթե առանձին լեզվին բնորոշ
հատկանիշն իր բնութագրերով համապատասխանում է նշույթավորման համընդհա-
նուր սկզբունքներին, ապա այն բնական հատկանիշ է:

Ըստ այդմ որևէ ձևաբանական երևույթ կարող է բնական համարվել, եթե.

- այն հանդիպում է մեծ թվով լեզուներում,
- լեզվական փոփոխությունների նկատմամբ կայուն է,
- լեզվական փոփոխությունների արդյունքում պարբերաբար ի հայտ է գալիս,
- երեխայի լեզվի ձևավորման վաղ փուլերում արդեն ունի հստակ մեխանիկական
գործառույթ,
- լեզվական սխալներն ու շեղումները չեն ազդում այդ երևույթի վրա
- առանձին լեզուներում ևս ունի գործառական բարձր հաճախականություն³:

Ընդհանուր առմամբ բնական լեզվաբանության հիմնադրույթներն իրենց մեջ
ներառում են ինչպես տիպաբանական, այնպես էլ ճանաչողական լեզվաբանական
ուղղություններին բնորոշ սկզբունքներ և միաժամանակ ստեղծում են յուրահատուկ
կամուրջ այդ երկուսի միջև:

Նշենք նաև, որ այս ուղղության տարբեր ներկայացուցիչներ տարբեր ելակետային
դրույթներից են քննարկում նշված փաստերը: Եթե Վ. Վուրցելի համար ելակետային
են տիպաբանական սկզբունքները, ապա Վ. Դրեալերի ձևաբանական կաղապարը
մեկնաբանվում է ակնհայտորեն ճանաչողական դրույթների հիման վրա:

Յ. Գաբրիելյանն իր վերոհիշյալ գործում առաջարկում է լեզվական ձևերի բնու-
թագրման եռաստիճան սկզբունքն այն հիմնավորմամբ, որ մարդկային ճանաչողու-
թյունը օբյեկտիվ աշխարհի առարկաներն առանձնացնում է երկու եզրային (բարձր-
ցածր, ուժեղ-թույլ և այլն) և մեկ միջին հատկանիշով, իսկ Վ. Վուրցելի կարծիքով,
ցանկացած ձևաբանական կազմություն կարելի է բնութագրել առավել բնական, նվազ
բնական և ոչ բնական եռաստիճան հատկանիշներով:

Անդրադառնալով արդի տիպաբանության հիմնադրույթներին հարկ է նշել, որ
դրանց հիմքում այսօր ավանդական «ինչպե՞ս» հարցադրման փոխարինումն է
«ինչու՞» հարցադրմամբ, որը ենթադրում է լեզվական երևույթների խորքային ուսում-
նասիրություն և էականորեն տարբերվում է առաջինից:

Ընդհանրապես ավանդական տիպաբանությունը քննադատվում է նաև այն հիմ-
նավորմամբ, որ հետազոտողը երբեք ձեռքի տակ չի կարող ունենալ աշխարհի բոլոր
լեզուների փաստերը և պնդել, որ լեզվական այս կամ այն ձևի գոյությունը բացառվում

³ Mayerthaler W., Morphological Naturalness, Ann Arbor, 1988, p. 47.

է: Մինչդեռ «ինչու՞»- տիպաբանությունը լեզվի բնականության դիրքերից կարող է մեկնաբանել ինչպես առանձին լեզվի, այնպես էլ լեզուների տարաբնույթ յուրահատկությունները և վեր հանել լեզվական կոնկրետ երևույթի առկայության (կամ բացակայության) պատճառներն ու պայմանները:

Անգլերենի բնական ձևաբանական կազմությունների յուրահատկությունների պարզաբանման համար կարևոր դեր ունեն մաս ճանաչողական գիտելիքները, քանի որ քննարկվող կադապարները կազմված են առաջին հերթին մարդկային ճանաչողությամբ ամրագրված իմաստային տարրերից: Անվանական ձևերի համար որպես այդպիսիք կարող են լինել շնչավոր, անշունչ, մարդ, կենդանի, սեռ, տարիք և այլ կարգի հատկանիշները, որոնք լեզվում հանդես են գալիս ստորադասական կապի ձևով, երբ գլխավոր հատկանիշներին ստորադասվում են ամանցյալները: Գլխավոր հատկանիշն էլ իր հերթին կախված է տվյալ համատեքստից բխող հաղորդակցական իրավիճակից: Այսպես, օրինակ, անգլերենում bachelor ձևն ունի չորս իմաստային իրացումներ. bachelor 1 – who has never married, bachelor 2 – young knight serving under the standard of another knight, bachelor 3 – who has the first or lowest academic degree և bachelor 4 – young fur seal when without a mate during breeding time, իսկ օրինակ, ըստ կառուցվածքային շրջապատի, “The old bachelor finally died” նախադասության մեջ bachelor ձևի իմաստային իրացումը կախված է old իմաստից, որից հետևում է, որ այդպիսով բացառվում են 2-րդ, 3-րդ, 4-րդ իմաստները և խոսակիցը տվյալ իրավիճակում վերձանում է bachelor 1-ի իմաստը: Ընդհանրապես առանձին լեզվի (տվյալ դեպքում անգլերենի) տիպաբանական և ճանաչողական փաստերի համադրումը բավականաչափ բարդ խնդիր է և պահանջվում են համապատասխան փորձառական հետազոտություններ, որոնց էությանն ու արդյունքներին անդրադարձ է կատարվում աշխատանքի հաջորդ գլուխներում:

Աշխատանքի երկրորդ գլուխը նվիրված է բնական լեզվաբանության և մանկալեզվաբանության տեսական և գործնական դրույթների վերլուծությանն ու դրանց փոխհարաբերությանը:

Ի տարբերություն ավանդական լեզվաբանական ուղղությունների, արդի լեզվաբանությունն իր տեսական դրույթների հիմնավորման նպատակով առանձին տեղ է հատկացնում մաս համապատասխան փորձառական հետազոտություններին: Ասվածը հատկապես վերաբերում է միջգիտակարգային ուղղություններին, ինչպիսին է մաս բնական լեզվաբանությունը, որի հետևորդները լեզվի բնական իրողությունները, բացի նորմավորված լեզվից, փնտրում են մաս նրա գոյության և գործառույթի տարբեր ձևերում:

Այդ առումով կարելի է առանձնացնել երկու հիմնական տեսակետներ. մի դեպքում բնական կազմություններ կարելի է տեսնել լեզվի տարածական կամ բարբառային տարբերակներում (եվրոպական ուղղություն), իսկ մյուսում՝ նախադարձական տարիքի երեխայի լեզվում (ամերիկյան ուղղություն): Այստեղ որպես ուսումնասիրության փորձառական հիմք են վերցվում նախադարձական տարիքի երեխայի լեզվի առանձնահատկությունները, քանի որ այդ տարիքում նորմավորված լեզվի ազդեցությունը նվազագույն է և լեզուն էլ համապատասխանաբար գտնվում է առավել բնական վիճակում:

Երեխայի լեզուն ուսումնասիրող լեզվաբանական միջգիտակարգը կոչվում է «մանկալեզվաբանություն» (անգլ. Pedolinguistics), իսկ համապատասխան եզրույթային բնութագիրը տրվել է շվեդ լեզվաբան Յ. Օկսասարի կողմից⁴:

Մանկալեզվաբանության ելակետային խնդիրը նախապես հանգում է այն բանին, թե նախադպրոցական տարիքի երեխան, որը դեռ չի տիրապետում նորմավորված լեզվին, ի՞նչ միջոցներ և ռազմավարություն է կիրառում արդյունավետ հաղորդակցման նպատակով:

Աշխատանքի այս գլխում խնդիր է դրված պարզաբանել մաս երեխայի գիտակցության մեջ լեզվական նշանների ձևավորման և դրանց իմաստի վերծանման հանգամանքները: Ինչպես ցույց են տալիս համապատասխան մանկալեզվաբանական և լեզվաճանաչողական հետազոտությունները (տես Է. Քլարկի, Լ. Բլումի, Դ. Սլոբինի, Ռ. Յակոբսոնի և այլոց աշխատությունները), առաջնային նշանները, որոնք ձեռք են բերվում երեխայի կողմից՝ խորհրդանշաններն են: Ասվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդկային ճանաչողությունն առաջին հերթին զգայական է կամ տեղի է ունենում նրա զգայարանների միջոցով: Նշենք մաս, որ խորհրդանշանները կարող են լինել անհատական և պայմանական:

Երեխան կարող է հնչյունական խորհրդանշանների (կամ բառերի) միջոցով ներկայացնել առարկան կամ երևույթը: Հաղորդակցման գործընթացում նա կատարում է բառաձևի և նրա իմաստի նույնականացում, ելնելով դրանց միջև առկա պատճառական կապից, որի հիման վրա էլ ձևավորում է պատկերանշանը: Նշված նույնականացման հանգամանքը առկա է մաս խոսակցի կողմից համապատասխան լեզվական նշանը վերծանելիս և այդպիսով ապահովում է տեղեկույթի համարժեք ընկալումը: Խնդիրն այստեղ այն է, թե կոնկրետ առարկայի մի քանի հատկանիշներից ինչպե՞ս է մասնավորեցվում նրա հաղորդակցական իմաստը, ինչը նորմավորված լեզվի հիման վրա միանշանակ կերպով դժվար է մեկնաբանվում:

Նորմավորված լեզվում նշված մասնավոր կամ էական հատկանիշն արդեն ամրագրված է հասարակայնորեն և լեզվական համակարգում բնութագրվում է պատկերանշանային պատճառաբանվածությամբ: Այլ կերպ՝ այստեղ գործում է Վ. Վուրբելի կողմից առաջադրված **մեկ ձև - մեկ գործառույթ** պատկերանշանային սկզբունքը: Իսկ ինչպե՞ս են ձևավորվում երկկազմ բառային արտահայտությունները երեխայի լեզվում: Ինչպես ցույց են տալիս համապատասխան փորձառական հետազոտությունները, անգլախոս երեխաների լեզվում նկատվում են երկկազմ ձևերի առանձին բաղադրիչների նշույթավորում և ոչ նշույթավորում: Ընդ որում գործառույթի տեսակետից առավել հաճախականությամբ բնութագրվող ձևերի թիվն ավելի փոքր է, քան նվազ գործառույթ ունեցողներիը: Տվյալ դեպքում, ի տարբերություն նորմավորված լեզվի, երեխայի լեզվում ոչ նշույթավորված (կամ առավել գործառական հաճախականությամբ) հանդես են գալիս no, more, hi, off, there տիպի սպասարկու բառեր, որոնք հիմնականում քերականական իմաստների արտահայտման միջոցներ են, ինչպես՝ no bed, no milk, no baby: Լ. Բլումի կարծիքով, այստեղ այն գործընթացն է, երբ երեխան

⁴ Stå u Oksaar Y. Einführung in die Pädolinguistik, Berlin, 1977.

հակադրական իմաստների գործադրմամբ ձգտում է ստեղծել համապատասխան պատկերանշանայնություն ամբողջ կառուցվածքի համար:

Բնականաբար այս ամենի հիմքում առկա-ոչ առկա հակադրական հատկանիշների ճանաչողական ըմբռնում է, ինչպես *no baby*, երբ մանկական սալակը, որտեղ սովորաբար երեխա է լինում, դատարկ է, *no milk*, երբ կաթի շիշն է դատարկ կամ *all gone book*, երբ գրադարակում սովորաբար դրվող գիրքը բացակայում է և այլն: Մյուս կողմից, սակայն, երկկազմ ձևերի և դրանց արտահայտած իմաստի պատճառակամությունը համատեքստից դուրս կարծես միանշանակ չի արտահայտվում, երբ, օրինակ, երեխան օգտագործում է *Mommy sock* արտահայտությունը մի դեպքում, երբ մայրը նրան գուլպա է հագցնում և մեկ այլ դեպքում, երբ նա ցույց է տալիս մայրիկի գուլպան: Իրականում *Mommy sock* կազմությամբ երեխան ստեղծում է խորհրդանշանային կաղապարներ առաջին դեպքում *Mommy is putting my sock on* և երկրորդ դեպքում *That's Mommy's sock* նախադասությունների համար: Ընդ որում երկրորդ դեպքում խորհրդանշանայնությունը բացարձակ է, քանի որ համապատասխան նախադասության իմաստը ամփոփված է *Mommy sock* կաղապարում՝ բաղադրիչների համապատասխան հաջորդականությամբ: Անդրադառնալով այս ձևերին L. Բլումն առանձնացնում է երեխայի կողմից առավել հաճախ գործածվող գոյական + գոյական կազմությունների քերականական իմաստների իրացման հետևյալ հնարավորությունները.⁵

1. Ենթակա+խնդիր՝ *Mommy sock*, երբ մայրը երեխային գուլպա է հագցնում:
2. Սեռական հոլով (պատկանելություն)՝ *Mommy sock*, երբ երեխան ցույց է տալիս մայրիկի գուլպան:
3. Որոշչային *Party hat*, երբ երեխան ցույց է տալիս իր տոնական գլխարկը:
4. Ենթակա- տեղի պարագա՝ *sweater chair*, երբ երեխան իր վերնագգեստը դնում է արձույն:
5. Շաղկապային՝ *umbrella boot* (անձրևանոց կոշիկ), երբ՝ մայրը անձրևանոցը և կոշիկները դնում է այնտեղ, որտեղ նստած է երեխան:

Կարծում ենք, սակայն, որ Բլումի կողմից ներկայացված կազմություններում իրականում ունենք հատկանիշ + առարկա բնական կաղապարներ, որոնց համատեքստային ծավալման դեպքում կարող ենք միայն խոսել այս կամ այն քերականական իմաստի իրացման մասին:

Նկատի ունենալով նաև դրանց հիմնականում գոյական +գոյական կառուցվածքը, կարող ենք ասել, որ գոյական բաղադրիչներից մեկը իրականացնում է հատկանշանային գործառույթ, ինչը հաստատում են նաև նշված ձևերը:

Ամերիկացի մանկալեզվաբան Դ. Մլոբինը գտնում է, որ հաղորդակցման գործընթացի համար կարևոր է երեխայի լեզվում հիշյալ երկկազմ ձևերի ծավալման հանգամանքների բացահայտումը: Այդ նպատակով մի շարք գիտնականներ՝ Մ. Բրայնը, Վ. Միլլերը, Ս. Էրվինը և Ռ. Բրաունը, ելնելով, այսպես կոչված, «առանցքային քերականության» (*pivot grammar*) սկզբունքներից, փորձել են պարզել, թե նախադասության կազմում ո՞ր բառերն են միմյանց հետ առավել հաճախ համակցվում: Համապա-

⁵ Bloom L. *Language development from two to three*, Cambridge, 1991.

տասխան հետազոտությունները ցույց են տալիս, որ կարելի է տարբերակել «առանց-բային բառեր» (pivot words), որոնք առավել հաճախակի են հանդիպում որոշակի դիրքերում և համակցվում են բազմաթիվ այլ բառերի հետ, ինչպիսին է, օրինակ, all-ը (all broke, all fix և այլն) և «բաց կարգի» (open class) բառեր, որոնք իրենց լայն ծավալով հանդերձ բնութագրվում են նվազ գործառական հաճախականությամբ: Այս դիտարկումների հիման վրա նախադարձական տարիքի երեխաների կողմից գործածվող նվազագույն (երկկազմ) կազմությունների համար սահմանվում են հետևյալ կաղապարները.

1. P₁+O=See boy, All broke, I see և այլն:
2. O+P₂=Push it, Boot off, Siren by և այլն:
3. O+O=Mommy sleep, Milk cup, Dry pants և այլն.⁶

Այստեղ P₁, P₂-ը առանձին բառեր են, որտեղ P₁-ի արժեքով կարող են իրացվել allgone (all gone), bye bye, big, more, իսկ P₂-ի արժեքով՝ off, in տիպի ձևերը: Որպես բաց կարգի բառեր (O-ի արժեքով) կունենանք boy, sock, Mommy տիպի ձևերը:

Ընդհանուր առմամբ վերը ներկայացված երեխայի լեզվի հոգելեզվաբանական ուսումնասիրության հիման վրա եզրակացնում ենք, որ NP (noun phrase-անվանական դարձված), VP (verbal phrase-բայական դարձված) և PP (prepositional phrase – նախդրային դարձված) կայուն կազմությունների կազմումը մարդու բնածին կարողություններից է և այն բացատրվում է նրա ճանաչողությամբ: Որպես ելակետ բնական լեզվաբանության հետևողներն առաջարկում են կայունության (ոչ նշույթավորվածության) սահմանման երեք սկզբունքներ.

1. Ոչ նշույթավորված միավորները կարող են կիրառվել առանց այլ օժանդակ միջոցների, ինչպիսին է հարցի պատասխանը, հմմտ.՝

Who chewed up, your shoe? My new puppy.

Ո՞վ է կրծել քո կոշիկը: Իմ նոր քոթորը:

2. Ոչ նշույթավորված ձևերը հեշտությամբ կարող են փոխարինվել դերանվանական ձևերով, հմմտ.՝ I saw him do it. **Ես տեսա նրան դա անելուց:** Այդպիսով him-ը փոխարինվում է my new puppy ,իսկ do it-ը՝ chew up my shoe կազմությամբ:

3. Ոչ նշույթավորվածները կարող են հանդես գալ նախադասության տարբեր հատվածներում և այդպիսով NP կազմությունները կարող են կատարել թե՛ նախադասության ենթակայի, թե՛ այլ անդամների դեր: Բացի այդ, կայուն միավորները կարող են հանդես գալ նախադասության սկզբում կամ վերջում⁷:

Բացի այս սկզբունքներից կարևոր է նաև այն հարցի պարզաբանումը, թե ինչպե՞ս են առաջանում նշույթավորված տարրերը: Պատկերանշանային կազմությունների բաղադրիչներից մեկը համարվում է առաջնային, իսկ մյուսները՝ երկրորդական կամ ստորադաս:

Աշխատանքի երրորդ գլխում քննարկվում է լեզվի բնական ձևաբանական միավորների առավել կարևոր հատկանիշներից մեկի՝ պատկերանշանայնության

⁶ Brown R., A first language: The early stages, London, 1993, p.117.

⁷ Bybee J., The Evolution of Grammar, Chicago, 1994, p 112.

խնդիրը, որն առանց չափազանցության, բնական լեզվաբանության (հատկապես ձևաբանության) անկյունաքարերից մեկն է:

Հարկ է նշել, որ լեզվաբանության մեջ վաղուց ամրագրված է հաղորդակցման գործընթացում լեզվական նշանի արտահայտության կողմի (ձևի) և բովանդակային կողմի (իմաստի) կամ նշանակիչի և նշանակյալի միասնական իրացման դրույթը: Ընդ որում այստեղ առաջնային է համարվում նշանակիչի և նշանակյալի փոխադարձ կապի կամ պատճառաբանվածության սկզբունքը: Մինևույն ժամանակ ակնհայտ է, որ լեզվական միավորների (հատկապես ձևաբանական կազմությունների) իմաստալից պատճառաբանվածության աստիճանը տարբեր է, ինչպես, օրինակ, բարդ բառերի մոտ այդ աստիճանն ավելի բարձր է, քան պարզ բառերի մոտ: Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ լեզվական նշանը պատճառաբանված է այնքանով, որ հաղորդակցման գործընթացում խոսողի և խոսակցի համար նրա բովանդակությունը ընդհանրական է: Նկատի ունենալով մաս, որ հաղորդակցման գործընթացն ըստ էության երկու տարբեր անհատների լեզվամտածողական յուրահատկություններով պայմանավորված լեզվախոսքային գործունեություն է, ապա կարևոր է պարզել մաս, թե ի՞նչ հիմքի վրա է խոսողը ձևավորում հաղորդակցական նշանի բովանդակությունը և ինչպե՞ս է այն իր համարժեք արտացոլումը գտնում խոսողի մոտ: Նշենք, որ դեռ Ֆ. Սոսյուրից սկսած պայմանականության, կամայականության և պատկերանշանայնության հասկացությունները կազմել են նշված խնդրի առանցքը: Այդ հասկացությունները մշտապես կիրառվել են նշանակիչի և նշանակյալի միջև առկա կապն ուսումնասիրելիս: Ընդ որում այդ հասկացություններից պատկերանշանայնությունը հաճախ դուրս է մնացել լեզվական նշանի բնութագրման պայմաններից և ներկայացվել որպես ոչ լիարժեք՝ իր ձևի և բովանդակության փոխհարաբերության տեսակետից:

Լեզվական նշանի տարբեր կողմերի վերաբերյալ գոյություն ունեցող պատկերացումները տարբեր են և նույնիսկ հակասական: Եթե փորձենք, այնուամենայնիվ, ընդհանուր եզրեր գտնել Ֆ. Սոսյուրի, Չ. Պիրսի և Կ. Բյուրիերի դրույթների միջև⁸, ապա կարելի է լեզվական նշանները դասակարգել հետևյալ կերպ.

1. ցուցչային նշան կամ հայտանշան (symbol), որը ուղղակիորեն հարաբերվում է իր կողմից նշվող առարկային: Այդ հարաբերությունը կարող է լինել ֆիզիկական, կամ պատճառական, ինչպես, օրինակ, ծուխը կրակի հայտանշանն է կամ կրակը ծխի առաջացման պատճառն է: Մարդու դեմքի կարմրությունը կարող է ամոթի զգացման կամ պարզապես արևահարության հետևանք լինել: Այստեղից էլ հետևում է, որ ցուցանշանները վերաբերում են ոչ միայն պատճառական, այլև հետևանքային իրողություններին և այդպիսով դրանք արտահայտում են պատճառահետևանքային կապեր առարկաների և երևույթների միջև:

2. Պատկերային նշան կամ պատկերանշան (icon), որը նշվող առարկայի հետ ունենում է նմանության հարաբերություն: Այդ նմանությունն առաջին հերթին կարող է լինել տեսողական, ինչպես առարկայի լուսանկարը, որն իր մեջ պարունակում է այդուհանդերձ որոշ վերացականություն, քանի որ լուսանկարը առարկայի եռաչափ պատկերը չէ, այլ ունի միայն երկու չափում և բացի այդ՝ այն չի արտացոլում առար-

⁸ Steu Böhler K., Sprachtheorie, Jena, 1982, Pierce CH., Collected papers, Vol. II, Cambridge, 1960.

կայի պատկերը 1:1 հարաբերությամբ: Իսկ դիմանկարի կամ պատկերանկարի դեպքում այդ վերացականությանն աստիճանն ավելի բարձր է և բնականաբար առարկայի հետ նմանությունն էլ՝ ավելի քիչ: Ուստի պատկերանշանայնությունը ոչ թե բացարձակ, այլ հարաբերական երևույթ է և կարելի է ընդունել նրա տարբեր աստիճանների գոյությունը:

3. Պայմանական նշան կամ խորհրդանշան (symbol), որն առարկայի հետ նմանություն ցույց չի տալիս, պայմանական է և մինչ գործադրելը այն նախապես պետք է յուրացնել: Բազմաթիվ լեզվական նշաններ արտահայտվող առարկայի կամ իրողության նկատմամբ գտնվում են խորհրդանշանային հարաբերության մեջ, ինչպես թվերը, ազգային դրոշմերը և այլն: Խորհրդանշանները ենթադրում են վերացարկյան ամենաբարձր աստիճան և ունեն հաճախակի գործառույթ:

Այս ամենով հանդերձ ակնհայտ է, որ խոսքային գործընթացում խոսողի և խոսակցի միջև լիարժեք հաղորդակցումը հիմնված է նշանների միջև նմանությունների վրա, քանի որ խոսողի (խոսակցի) կողմից ուղարկվող նշանը խոսակցի (ընդունողի) կողմից ցանկացած պարագայում վերծանվում է նմանության հատկանիշներով: Մյուս կողմից, հաղորդողը, որը նշանի աղբյուրն է, այն ստեղծում է պատճառական կապերի հիման վրա, ինչը, սակայն առանց պայմանականության ընդունողի կողմից չի կարող վերծանվել: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ լեզվական նշանի բովանդակությունը (նշանակյալը), այնուամենայնիվ, պարունակում է ավելին, քան արտահայտում է նշանակիչը, և պայմանականությունը դառնում է կարևոր նախապայման համապատասխան ընկալման համար: Օրինակ, անգլ. cuckoo բառի [kʌkʊ:] նշանակիչը միևնույն զուգորդումն է առաջացնում խոսողի և խոսակցի մոտ, որոնք իմասի տեսակետից ընկալում են թռչնի համապատասխան տեսակն իր արտաբերած ձայնով, իսկ մյուս նշանակությունները (ինչպես՝ «բացբերան») արդեն պայմանականությամբ են իրացվում խոսքում: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ առաջին դեպքում, երբ վերացարկյան աստիճանը բավականաչափ ցածր է, նշանակյալի և նշանակիչի կապն առավել հստակ է, իսկ իմաստը՝ քափանցիկ: Ուստի տվյալ դեպքում պատկերանշանայնությունն իրացվում է իր ամբողջ ծավալով:

Պատկերանշանայնությունն այլ կերպ է ներկայանում լեզվի բարդ ձևաբանական կազմություններում, որտեղ առկա են բարդ շարակարգային հարաբերություններ և որոնք բնութագրվում են միավորների շարադասական հեռավորությամբ, ինչն էլ պատճառականության տարբեր աստիճաններով է արտահայտվում: Ընդ որում տվյալ հարաբերություններում գործում է բնական այն սկզբունքը, որ միավորների իմաստային սերտ կապը պատճառաբանվում է նվազ շարադասական հեռավորությամբ, ինչպես, օրինակ, անգլերենի cause to die պատճառական կազմությամբ ասույթում գործողի և գործողության (բայի) միջև շարադասական հեռավորությունն ավելի մեծ է, քան նույն իրողությունն արտահայտող kill անցողական բայով կառույցում, հմտ՝

a. I killed the chicken.

b. I caused the chicken to die.

Այս առումով կարելի է տարբերակել երկու կարգի հասկացություններ. պատճառաբանվածություն և շարահյուսական համադասություն: Առաջին դեպքում ունենք պատկերանշանային պատճառաբանվածություն, որն արտահայտվում է շարակարգային

բաղադրիչների իմաստային և շարադասական սերտ կապով, իսկ երկրորդում համադաս կազմություններ, որտեղ առկա են բազմիմաստ կապեր:

Այսպես, օրինակ, անգլերեն *sweet and sad songs* կազմության մեջ *sweet* և *sad* բաղադրիչները մի դեպքում հարաբերվում են մման, իսկ մեկ այլ դեպքում՝ տարբեր վերաբերյալների (*sweet songs and sad songs*): Առաջին կազմությունը պատկերանշանային պատճառաբանվածության շնորհիվ համադասական շաղկապի գեղչման հնարավորություն է ստեղծում (*sweet sad songs*), իսկ երկրորդն այն բացառում է: Ասվածը հատկապես ակնառու է, եթե համադաս միավորները հակադիր իմաստների կրողներ են, ինչպես՝

- a. good and bad news
- b.* good bad news

Ներկայացված դրույթն, անշուշտ, բոլոր լեզուների համար ընդհանուր չէ և պայմանավորված է բուն ներլեզվական օրինաչափություններով, ինչպես, օրինակ, անգլերեն ... *that John* [[put the vase] on the table] երկրորդական նախադասության մեջ *put* բային ավելի մոտ է *the vase* շարույթը, քան *on the table*-ը: Հայերենում թե՛ ..., որ **Ջոնը ծաղկամանը դրեց սեղանին** և թե՛ ..., որ **Ջոնը դրեց ծաղկամանը սեղանին** նախադասություններում միևնույն է ունենք մույն բաղադրիչների սերտ կապը, իսկ գերմաներեն..., *dass John* [*die Vase* [*auf den Tisch stellte*]] համարժեք նախադասության մեջ, սակայն, *die Vase* և *stellte* իմաստային կապը խզված է *auf den Tisch* շարույթով:

Ձևաբանական նվազագույն կառուցվածքներում, բնականաբար, մույն մոտեցումը կիրառելիս ունենում ենք փոքր-ինչ այլ պատկեր: Այդ դեպքում լեզուների միջև եղած նյութական տարբերությունները համարվում են երկրորդական, եթե համեմատենք անգլերենի *read-er*-ը , գերմ. *Les-er*, հայ. կարդաց-ող, ռուս. *чита-тель* և այլ ձևերի հետ: Այսինքն՝ բառակազմական պատկերանշանայնության դեպքում կարևոր է համապատասխան բաղադրիչների գործառնությունն նշանակությունը, իսկ ձևը պայմանական է կոնկրետ լեզուների համար:

Նկատի ունենալով, որ սույն աշխատանքում որպես հետազոտական նյութ է ծառայում անգլերենը, ուստի համապատասխան ձևաբանական կազմությունների վերլուծության համար առաջնային ենք դիտում անգլերենի տվյալները, որոնց հիման վրա էլ կկատարվեն մաս տիպաբանական եզրահանգումներ:

Մինչ այդ դիտարկենք Վ. Վուրցելի պատկերանշանայնության աստիճանավորման դրույթը, որը հիմնված է անգլերենում հոգնակի թվի կազմության բնական կաղապարի վրա:

Այդպիսով մա առաջարկում է.

1.առավելագույն պատկերանշանայնություն, երբ կառուցվածքային պատկերանշանայնությունը ներկայացնում է հատույթային-հավելական կաղապարով, ինչպես՝ *boy-boy-s*:

2.Առավելագույնից պակաս պատկերանշանայնություն, երբ կառուցվածքային պատկերանշանայնությունը ներկայացնում է ձևափոխական հավելական կաղապարով, ինչպես՝ *brother – brethren*:

3.Նվազ պատկերանշանայնություն, երբ կառուցվածքային պատկերանշանայնությունը ներկայացնում է միայն ձևափոխական կաղապարով, ինչպես՝ *goose-geese*:

4.Ոչ պատկերանշանայնություն, երբ այն ոչ մի ձևով չի դրսևորվում, ինչպես՝ sheep-sheep.⁹

Կարծում ենք, որ այս սահմանումները փոքր-ինչ այլ մեկնաբանմամբ կիրառելի են նաև լեզվական այլ կառուցվածքների նկատմամբ, եթե նկատի ունենանք, որ ըստ այդ սահմանումների ենթադրվում են հետևյալ ընդհանրացված աստիճանական կաղապարները:

1. առավել ոչ նշույթավորված կամ բնական
2. պակաս ոչ նշույթավորված կամ բնական,
3. նվազ ոչ նշույթավորված կամ բնական,
4. նշույթավորված կամ ոչ բնական:

Աշխատանքի տրորող գլխում, անդրադարձել ենք անգլերենին բնորոշ բնական ձևախմբատային կաղապարների վերլուծությանը և այն ներկայացվում է առավելապես կառուցվածքային պատկերանշանայնության սկզբունքով՝ ըստ նշույթավորման վերը առաջարկված հատկանիշների:

Ընդհանուր առմամբ ձևախմբատային կաղապարների սահմանման հարցում բավականաչափ խնդրահարույց են լեզուների (տվյալ դեպքում անգլերենի) դարձվածային կազմությունները, որոնք բնական ձևաբանության (ինչպես նաև շարահյուսության) համար առանձին հետաքրքրություն են ներկայացնում: Այս առումով ասենք, որ լեզվի դարձվածային միավորների բաղադրականությունն այն հիմնական հատկանիշն է, որի հիման վրա ձևավորվում են կառուցվածքային պատկերանշանի յուրահատկությունները: Տվյալ դեպքում պետք է նկատի ունենալ, որ դարձվածները բաղկացած են նվազագույնը երկու բաղադրիչներից, կապակցվում են տարբեր լեզվական միջոցներով և բնութագրվում են իմաստակառուցվածքային տարաբնույթ առանձնահատկություններով, որոնցից կառանձնացնենք հետևյալները.

- անվանողական գործառույթ, որն ապահովում է դարձվածային միավորների սովորական իրացումը հաղորդակցման գործընթացում,
- բազմանդամություն,
- ձևի և բովանդակության միասնություն,
- սովորական իրացում,
- իմաստային և կառուցվածքային կայունություն,
- սաստկացուցիչ գործառույթ,
- հատկաբանական իմաստ և գործառույթ:

Թվարկված հատկանիշներից առաջին հինգը, ինչպես տեսնում ենք, բնորոշ են լեզվի բնական կազմություններին և բխում են դրանց էությունից, իսկ վերջին երկուսը խոսքային նշանակություն ունեն և կարող են իրացվել ինչպես անհատապես, այնպես էլ հասարակայնորեն:

Բնական նշանագիտության տեսակետից կարևոր է դարձվածների իմաստակառուցվածքային կայունությունը, ինչը հնարավորություն է տալիս դիտարկել դարձվածի՝ որպես լեզվական նշանի բոլոր կողմերը միաժամանակ: Այլ կերպ՝ լեզվական հաղորդակցման մեջ խոսողը միանշանակ կերպով կարող է ծածկագրել տեղեկույթը, իսկ

⁹ Wurzel W. Inflectional Morphology and Naturalness, Dordrecht, 2001.

խոսակիցը նույն կերպ վերծանել այն: Հետևաբար նմանության հատկանիշի հիման վրա հնարավոր է կոնկրետ կազմությանը հատկացնել պատկերանշանային բնութագիր: Այդ առումով հետաքրքիր է դիտարկել Հորնբիի բառարանում հանդիպող red herring կառուցվածքը հետևյալ մեկնաբանություններով.

red herring 1- “smoke-cured herring” (ծխեցրած տառեխ), որտեղից ածանցված ունենք.

neither fish, flesh, nor good red herring=of a doubtful or ambiguous nature, which cannot be defined և

red herring 2-, որը ներկայացնում է “draw the red herring across the trail:=introduce irrelevant matter to distract attention from the subject discussed” մեկնաբանությունից հետևող դարձվածային հատվածի ազդանշանային ձև:

Երկու կազմություններում էլ red ձևը կարծիր գույն չի նշանակում, այլ ցույց է տալիս ծխեցված ձկան հեռավոր նմանությունը կարծիր գույնի հետ: Պատկերանշանայնության տեսակետից, այստեղ առկա է բնական հատկանիշ և համապատասխան ձևահիմաստային կաղապարը համընկնում է A+S (հատկանիշ + առարկա) բնական կաղապարի հետ:

Այս ամենով հանդերձ, անգլերենին բնորոշ դարձվածների ձևահիմաստային կաղապարները աշխատանքում ներկայացված են առավելապես կառուցվածքային պատկերանշանայնության սկզբունքով՝ վերը առաջարկված հատկանիշների հիման վրա: Այսպիսով բնականության տարբեր հատկանիշներով բնութագրվող դարձվածքային կազմությունները, ըստ անգլերենի ներլեզվական օրինաչափությունների հիման վրա ձևավորվող խոսքիմաստային բաղադրիչների, կարող են կազմել՝ ածական + գոյական, գոյական + գոյական կամ բայ + գոյական և այլ կաղապարներ:

Ընդ որում, ըստ առավել պատկերանշանայնության սկզբունքի, կունենանք հետևյալ երկկազմ կաղապարները.

Պարզ երկկազմ կաղապարներ

1. Ածական + գոյական

Hot dog, red carpet, best man, black market, white elephant և այլն:

Այս կաղապարին բնորոշ է այն առանձնահատկությունը, որ պատկերանշանայնության պահպանման նպատակով նրա ածական բաղադրիչը հիմնականում փոխարինելի չէ: Այն բազմաթիվ առումներով կարելի է համարել առավել բնական կամ ոչ նշույթավորված, ինչը ցույց է տալիս նաև երեխայի լեզվի ուսումնասիրությունը: Կարելի է ասել, որ ինչ-որ չափով այս կաղապարին են հարում նաև անգլերենի որոշչային անձնանուններով կազմված դարձվածները, ինչպես՝

the /a black Maria,

the /a Good Samaritan,

the /a doubting Thomas,

the Black Death և այլն:

2. Գոյական + ‘s + գոյական

the devil’s advocate,

the lion’s den,

the lion’s share և այլն:

Այստեղ կարելի է նշել մակ բառակազմական պատկերանշանայնությամբ բնութագրվող book – worm , pickpocket և մման մի շարք այլ կազմություններ:

Շաղկապավոր երկկազմ կաղապարներ

1. Գոյական + գոյական

bread and butter,
cup and saucer,
knife and fork,
bed and breakfast,
ladies and gentlemen,
the haves and have-nots,
the ayes and noes և այլն:

Այս և մման շատ այլ կազմություններ and շաղկապի միջոցով կազմում են իմաստաբանորեն կայուն կաղապարներ և նրանց բաղադրիչները փոխարինելի չեն:

2. Գոյական + նախդրային դարձված

Այս տիպի կաղապարները բնութագրվում են հիմնականում մվազ բնականությամբ և որոշ դեպքերում առաջանում են հակասություններ բնականության և մանկալեզվաբանության սկզբունքների միջև:

Այդուհանդերձ, քանի որ դրանք արտացոլում են անգլերենի տիպաբանական յուրահատկությունը, հարկ ենք համարում ներկայացնել այս կազմությունները ևս, ինչպես՝

a/the snake in the grass,
a/the dog-in the manger,
a/the man-of-war,
a man of the world և այլն:

Նախադասության բնույթի դարձվածային կաղապար

Այս կաղապարի մեջ ներառվում են այնպիսի գոյականներ, որոնց միասնությամբ ստեղծվում են նախադասության արժեք ունեցող դարձվածներ: Կարծում ենք, որ թերևս ճիշտ կլիներ դրանք անվանել «թվացյալ նախադասություններ», ընդ որում, ըստ իրենց արտահայտած իմաստի, դրանք կարող են իրացվել թե՛ որպես պատմողական և թե՛ հրամայական ու հարցական բնույթի նախադասություններ, ինչպես՝

I owe you,
forget-me not,
do-it-yourself,
hand-me down և այլն:

Նշենք մակ, որ միայն ածականներից կազմված երկկազմ կաղապարներում բնականության հատկանիշը լիարժեք չի իրացվում, քանի որ դրանք հիմնականում համադաս կառույցներ են, թեև որպես դարձվածային միավորներ նրանց բաղադրիչները ևս անփոխարինելի են, ինչպես օրինակ՝

hale and hearty,
safe and sound,
hard and fast և այլն:

Հազվադեպ հանդիպում են մակ or շաղկապով կառույցներ, ինչպես՝ dead or alive և

այլն:

Ժամանակակից անգլերենին բնորոշ են մասնականի համեմատության աստիճաններով կազմված կաղապարներ, որոնք ևս բնականության տեսակետից լիարժեք կազմություններ չեն, թեև նույնպես բնութագրվում են կառուցվածքի որոշակի կայունությամբ.

as mad as a hatter,

drunk as a lord,

deaf as an adder և այլն:

Բնականության տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում անգլերենի բայական կաղապարները, որոնք ի տարբերություն անգլերենի, բառակազմական մեծ արդյունավետություն ունեն, բնութագրվում են նվազ բնական և այդուհանդերձ ոչ նշույթավորվածության հատկանիշով: Այստեղ կառանձնացնենք բայ + գոյական կազմությունը՝ իրացման հետևյալ կաղապարներով.

1. Բայ + the + գոյական

to break the ice (=to make a beginning),

to back the wrong horse ,

to burn the midnight oil և այլն:

Այստեղ the որոշյալ հոդի պարտադիր առկայությունն ամբողջ կառուցվածքին հաղորդում է որոշակի պատկերանշանայնություն: Սակայն այս կաղապարը, բնականության բարձր աստիճանով չի բնութագրվում, քանի որ ցանկացած փոխարարելիական իմաստով ձևի գործառույթ լրացուցիչ մեկնաբանությունների կարիք ունի, օրինակ՝

to rain cats and dogs.

to play cat and mouse,

to go to rack and ruin և այլն:

Այս կազմություններում, անգլերենի լեզվամտածողության տեսակետից, անշուշտ թե՛ իմաստային և թե՛ կառուցվածքային պատկերանշանայնությունն առկա է: Մյուս կողմից, սակայն, այստեղ չի գործում բնականության ընդհանրական տեսության մեկ ձև - մեկ գործառույթ սկզբունքը՝ փոխարբերական իմաստների գործածության պատճառով:

Նույն կերպ նվազ բնականությամբ են բնութագրվում անգլերենի բայական, համեմատական դարձվածները, որոնց հիմնական դերը համապատասխան արտահայտության իմաստի սաստկացումն է և նրա պատկերավորումը:

to work like a horse (or a dog, a nigger) (=to work very hard),

to eat like a horse (or a dog),

to sleep like a log (or a top) (= to be fast asleep) և այլն:

2. Բայ+ստացական դերանուն + գոյական

Անգլերենին բնորոշ այս կաղապարն ունի որոշակի գործառական արդյունավետություն: Սակայն թե՛ դրանց միջոցով արտահայտված փոխարբերական իմաստների և թե՛ նվազ պատկերանշանայնության պատճառով այստեղ բնականության մասին խոսք լինել չի կարող: Այդուհանդերձ տիպաբանության տեսակետից հետաքրքիր են հետևյալ դարձվածները.

to keep one's fingers crossed,
to gnash one's teeth,
to bear one's cross և այլն:

Այստեղ չեն քննարկվել անգլերենի առավել կայուն դարձվածային միավորները կամ հատկաբանությունները (իդիոմները), քանի որ դրանցում ամբողջ կազմության վերախմաստավորման պատճառով, պատկերանշանայնության հատկանիշը աղոտանում է, այսինքն ունենում ենք նշույթավորված կազմություններ:

Աշխատանքի վերջում տրվում են համապատասխան եզրակացություններ, որոնք ներկայացնում են կատարված վերլուծությունների արդյունքները.

1. Բնական լեզվաբանության հիմնադրույթներն իրենց մեջ ներառում են ինչպես տիպաբանական, այնպես էլ ճանաչողական լեզվաբանական ուղղություններին բնորոշ սկզբունքներ ու մոտեցումներ և միաժամանակ ստեղծում են յուրատեսակ կամուրջ վերջիններիս միջև: Ընդ որում համապատասխան լեզվական փաստերը կարելի է դիտարկել թե՛ մասնավոր և թե՛ ընդհանուր տիպաբանության տեսակետից, որն ավելի համոզիչ է դարձնում կոնկրետ երևույթի մեկնաբանությունը: Այդպիսով անհրաժեշտ վերլուծությունները տարվում են ճանաչողությունից դեպի տիպաբանություն՝ կենտրոնում ունենալով լեզվի բնականության տեսությունը:

2. Անգլերենի (ինչպես նաև այլ լեզուների) բնական ձևաբանական կազմությունների ուսումնասիրության համար կարևոր են հետևյալ դրույթների պարզաբանումը.

- կարգերի իմաստային նշույթավորումը, ըստ որի, որևէ կարգ իմաստաբանորեն նշույթավորված կամ ոչ նշույթավորված է, եթե համապատասխանում է կամ չի համապատասխանում խոսողի խոսքային մտադրություններին:

- Խորհրդանշանային նշույթավորումը ենթադրում է, որ լեզվական ձևերի խորհրդանշանացումը բնական և նպատակահարմար է, եթե այն համապարփակ, թափանցիկ և կառուցվածքով պատկերանշանային է: Այն խորհրդանշանացումները, որտեղ նույն գործառնությունը միշտ նույն ձևով է արտահայտվում այդ առումով համապարփակ են և թափանցիկ: Խորհրդանշանացումը կառուցվածքով պատկերանշանային է, երբ տարբեր կարգերի իմաստային նշույթավորվածության ոչ համամասնական հարաբերությունները հանդես են գալիս որպես ձևական համամասնություն: Այլ կերպ՝ թեև բնական լեզուների (այդ թվում նաև անգլերենի) համակարգերն իրենց բնույթով ոչ համակարգային են (կամ ոչ համամասնական), այդուհանդերձ դրանց ոչ նշույթավորված տարրերի միջև համակարգային հարաբերությունները տեսանելի են:

3. Բնական լեզվաբանության և մանկալեզվաբանության համար ընդհանուր խնդիրներ են.

ա) Ի՞նչ հաջորդականությամբ է երեխան յուրացնում մայրենի լեզվի այս կամ այն միավորը կամ կարգերը, որի օգնությամբ հնարավոր կլինի վերծանել նաև այդ կարգերի էությունը:

բ) Ի՞նչ հաջորդականությամբ է երեխան գործածում լեզվական միավորներն ու կառուցվածքները, որի օգնությամբ բացահայտվում է լեզվի համապատասխան օրինաչափությունների համակարգը, եթե նկատի ունենանք, որ ընդհանուր օրինաչափությունները երեխայի կողմից ավելի շուտ են յուրացվում, քան մասնավորները: Այս

առումով հիշատակման են արժանի անգլերենում հոգնակի թվի կազմության ընդհանուր և մասնավոր դեպքերը:

Կարևոր խնդիր է նաև երեխայի այն ճանաչողական կարողությունների բացահայտումը, որոնք նպաստում են լեզվական հաղորդակցմանը:

4. Խոսքային գործընթացում խոսողի և խոսակցի միջև լիարժեք հաղորդակցումը ենթադրում է լեզվական նշանների նմանություն կամ պատկերանշանայնություն, քանի որ խոսողի (հաղորդողի) կողմից ուղարկվող նշանը խոսակցի (ընդունողի) կողմից վերծանվում է նմանության հատկանիշների հիման վրա: Միևնույն ժամանակ, հաղորդողը, որը նշանի աղբյուրն է, այն ստեղծում է պատճառական կապերի հիման վրա, ինչը, սակայն, ընդունողի կողմից առանց պայմանականության չի կարող վերծանվել, եթե նկատի ունենանք, որ լեզվական նշանի բովանդակությունը (նշանակյալը) այնուամենայնիվ պարունակում է ավելին, քան արտահայտում է նշանակիչը և պայմանականությունը դառնում է կարևոր նախապայման համապատասխան ընկալման համար: Ուստի առավել բնական լեզվական նշանը պատկերանշանն է (icon): Միևնույն ժամանակ այդ պատկերանշանային պատճառաբանվածության հիմքը տարբեր լեզուներում կարող է տարբեր լինել և պայմանավորված է արտալեզվական և հատկապես ճանաչողական գործոններով:

5. Ժամանակակից անգլերենի ձևակազմական միավորների պատկերանշանայնության կամ ոչ նշույթավորվածության համար կիրառելի են հետևյալ սկզբունքները.

ա) ոչ նշույթավորված միավորները կարող են կիրառվել առանց այլ օժանդակ միջոցների, ինչպիսին է հարց ու պատասխանը:

բ) Ոչ նշույթավորված ձևերը կարող են հեշտությամբ փոխարինվել դերանվանական ձևերով:

գ) Ոչ նշույթավորվածները կարող են հանդես գալ նախադասության տարբեր հատվածներում և այդպիսով NP կազմությունները կատարում են թե՛ նախադասության ենթակայի, թե՛ այլ անդամների դեր: Բացի այդ, հիշյալ միավորները կարող են հանդես գալ ինչպես նախադասության սկզբում, այնպես էլ վերջում:

6. Անգլերենի և հայերենի համապատասխան փաստերի կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու լեզուներում էլ առարկայի (գոյականի) հատկանիշի (ածականի) միջև գոյություն ունի պատկերանշանային պատճառական կապ, որն իրացվում է NP (noun phrase) կառույցների վերին մակարդակում՝ N-Det հարաբերությամբ, իսկ ավելի ստորին մակարդակներում նման հարաբերության մեջ գտնվող տարրերի միջև հեռավորության աճի հետևանքով նվազում է նաև համապատասխան կազմության պատկերանշանայնության աստիճանը: Ամենաստորին մակարդակում կառուցվածքային պատկերանշանայնության սահմաններն աղոտանում են՝ կոնկրետ կազմության քերականացման պատճառով: Երկու լեզուների միջև NP կազմությունների իրացման տիպաբանական ընդհանրություններ կարելի է տեսնել նաև ավելի բարդ N-PP հարաբերություններում:

Ինչ վերաբերում է VP (verbal phrase) կազմություններին, ապա դրանք ընդհանուր տիպաբանության տեսակետից կարելի է համարել մույնպես պատկերանշանային այն պատճառով, որ տվյալ դեպքում ըստ էության ուղղակիորեն արտացոլվում է առարկա

+ հատկանիշ բնական կաղապարը, եթե բայը դիտում ենք որպես առարկայի ժամանակի մեջ փոփոխվող հատկանիշի ցուցիչ:

7. Համապատասխան վերլուծություններից հետևում է, որ անգլերենի ձևաբանական նվազագույն կաղապարների համար ընդունելի են բնականության հետևյալ աստիճանները.

- առավել ոչ նշույթավորված կամ բնական
- պակաս ոչ նշույթավորված կամ բնական
- նվազ ոչ նշույթավորված կամ բնական
- նշույթավորված կամ ոչ բնական:

Ըստ այս մոտեցման աշխատանքում սահմանվում են հետևյալ բնական կաղապարները.

ա) Det + N առավել ոչ նշույթավորված կամ բնական (ընդ որում այստեղ նկատի է առնվում ոչ միայն a dog տիպը, այլև երեխայի լեզվում ոչ նշույթավորված no bed, more car և այլ կազմությունները):

բ) NP - պակաս ոչ նշույթավորված կամ բնական

գ) VP - նվազ ոչ նշույթավորված կամ բնական

դ) PP - նշույթավորված կամ ոչ բնական:

8. Քանի որ բարդ լեզվական ձևերի հիմքում նույնպիսի բովանդակություններ են, ապա դրանց կաղապարավորման հնարավորություններն առավել հստակ են բացահայտվում անգլերենն այլ լեզուների, (մասնավորապես գերմաներենի) հետ զուգադրելիս: Ընդ որում առավել արդյունավետ է, այսպես կոչված, երրորդ համեմատելի (tertium comparationis) սկզբունքը: Վերջինիս գործադրման արդյունքում պարզ է դառնում, որ հատկապես N+-ist ձևախմբատային կաղապարը թե՛ անգլերենում և թե՛ գերմաներենում ոչ նշույթավորված է, քանի որ բնութագրվում է պատկերանշանայնության բարձր աստիճանով: Ընդհանուր առմամբ մման ձևախմբատային կաղապարների վերլուծությունը ցույց է տալիս, որ անգլերենի և գերմաներենի համար որպես ընդհանուր կաղապարներ կարելի է դիտել V+-er, N+-er, և N+-ist կազմությունները:

9. Բնականության տարբեր հատկանիշներով օժտված են անգլերենի ածական+գոյական, գոյական 's + գոյական, գոյական+գոյական, գոյական+նախդրային դարձված և մի քանի այլ կաղապարներ, որոնցից առանձնանում են անգլերենի տիպաբանական յուրահատկությունը բնորոշող բայ+գոյական դարձվածային կազմությունները: Այստեղ թեև երբեմն չի գործում մեկ ձև - մեկ գործառույթ բնական սկզբունքը, սակայն, բուն անգլերենի լեզվամտաձողության տեսակետից արտահայտում են թե՛ իմաստային և թե՛ կառուցվածքային պատկերանշանայնություն: Բացի այդ, ժամանակակից անգլերենի պատճառական բայերով կաղապարները միանշանակ կերպով բնութագրվում են կառուցվածքային պատկերանշանայնությամբ, քանի որ նրանց գործառույթում առկա է ինչպես իմաստային, այնպես էլ կառուցվածքային թափանցիկություն:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Մանուկյան Ա.Է. Բնական ձևաբանական կաղապարների պատկերանշանային հիմքն անգլերենում // Օտար լեզուները Հայաստանում, Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2012թ., №4, էջ 9-16:
2. Մանուկյան Ա.Է. Բնական ձևաբանության ելակետային սկզբունքները // Օտար լեզուները Հայաստանում, Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2012թ., №6, էջ 14-20:
3. Մանուկյան Ա.Է. Մանկալեզվաբանության դրույթները որպես լեզվի բնականության տեսության փորձառական հիմք // Օտար լեզուները Հայաստանում, Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2013թ. №2, էջ 21-30:
4. Մանուկյան Ա.Է. Շարահյուսական ընդհանրույթների սահմանումը // Օտար լեզուներ և գրականություն (տեսություն և պրակտիկա), Երևան, ԵՊՀ հրատ., 2009թ., էջ 34:

Манукян Алиса Эмильевна

**ТИПОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ЕСТЕСТВЕННЫХ
МОРФОЛОГИЧЕСКИХ МОДЕЛЕЙ В СОВРЕМЕННОМ АНГЛИЙСКОМ
ЯЗЫКЕ**

Диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.07 – “Германские языки”.

Защита диссертации состоится 13 декабря 2013 г. в 12:00 на заседании специализированного совета 009 “Германские языки” ВАК РА при Ереванском государственном университете.

Резюме

Настоящая диссертационная работа посвящена исследованию так называемых естественных морфологических моделей английского языка с точки зрения языковой типологии.

Актуальность данного исследования обусловлена прежде всего интенсивным развитием современной типологии и естественного языкознания и внедрением новых принципов и методов изучения морфосемантических структур языков. В данном случае подразумевается глубинное изучение соответствующих моделей языков вообще и английского в частности.

Цель исследования заключается в изучении тех морфологических структур английского языка, которые в традиционных лингвистических исследованиях интерпретируются не однозначно и часто соответствующие выводы ученых расходятся. В связи с формулированной в работе целью исследования в диссертации были поставлены и решены следующие задачи:

- По возможности всесторонне выявить сущность теории естественности при изучении языков и в общих чертах формулировать принципы образования естественных морфологических моделей;
- Исходя из семиотических, прагматических и когнитивных теорий, исследовать типологические особенности основных морфосемантических структур английского языка, оценивая их с точки зрения естественности;
- Выявить формы образования и функционирования естественных морфологических единиц английского языка сопоставляя их с соответствующими структурами других языков;
- Предпринять попытку выявления основных характеристик естественных морфологических явлений английского языка и их соотношения и соотношенность к другим элементам языковых уровней, исходя из того, что

морфологические категории участвуют в построении категорий синтаксиса и интегрируют отношения между словами и их грамматическими формами.

Для решения поставленных в работе задач были применены методы сопоставления, общего сравнения, дистрибуции, а также метод лингвистического моделирования. При этом для анализа и оценки исследуемых морфосемантических моделей применяются положения естественного подхода изучения языков и онтолингвистики.

Новизна настоящего исследования обусловлена прежде всего самой постановкой задачи – выявить типологические особенности первичных морфосемантических структур английского языка, исходя из принципов и понятий естественной лингвистики. По существу здесь впервые предпринимается попытка всестороннего изучения естественных морфологических структур английского языка и их классификации по типологическим критериям языкового моделирования.

Теоретическое значение исследования состоит в применении принципов и методов естественной лингвистики для выявления типологических характеристик соответствующих морфологических структур английского языка.

Практическая значимость работы заключается в том, что ее результаты могут найти применение в дальнейших исследованиях в области типологии английского языка, а также в соответствующих практических и переводческих курсах.

Во введении обосновывается выбор темы, актуальность, научная новизна, теоретическое и практическое значение, отмечается предмет исследования, цели и использованные методы.

В первой главе устанавливается сущность маркированности словоформ и структур в английском и разрабатываются методы классификации этих структур по принципу ступенчатой естественности.

Во второй главе рассматриваются основные принципы педолингвистики, способствующие изучению естественных признаков двухкомпонентных лексических единиц английского языка. В результате соответствующего анализа устанавливаются как основные формы реализации этих единиц в детской речи, так и способы грамматикализации в английском языке.

В третьей главе предпринята попытка выявления иконических особенностей некоторых морфологических структур английского языка на основе “естественного” подхода изучения языка.

В четвертой главе выявляются типологические особенности первичных морфосемантических структур английского языка, исходя из принципов и понятий естественной лингвистики.

В заключении диссертации обобщены результаты проведенного исследования.

Alisa E. Manukyan

TYPOLOGICAL PECULIARITIES OF NATURAL MORPHOLOGICAL MODELS IN MODERN ENGLISH LANGUAGE

SUMMARY

The present research is devoted to the study of the so-called natural morphological patterns of English from the point of view of linguistic typology. The relevance of the research can be attributed to the intensive development of modern typology and Natural Linguistics as well as to the introduction of new principles and methods of analyzing the structures of morphosemantic languages, which means in-depth study of relevant models of languages in general and English in particular.

The aim of the research is to examine the morphological structures of the English language which are interpreted ambiguously in traditional linguistic studies and cause disagreement.

In order to achieve the goal of the research the following **objectives** are set forth:

- to present the essence of Natural Theory in the study of languages, and to formulate the principles of formation of natural morphological models in general;
- to explore the typological features of the basic morpho-semantic structures of English, on the basis of semiotic, pragmatic and cognitive theories, evaluating those structures in terms of naturalness;
- to identify the type of formation and functioning of natural morphological units of English, comparing them with the corresponding structures of other languages;
- to identify the main morphological characteristics of natural phenomena in English and reveal their correlation and relationship with the other language elements, assuming that the morphological categories involved form, the categories of syntax and integrate the relationships between words and grammatical forms.

In order to solve the problems methods of general comparison, distribution and the method of linguistic modeling have been applied. The foundations of the natural approach to the study of language and ontolinguistics are implemented in the work in order to analyze and evaluate the morpho-semantic models.

The novelty of the research is provided by the formulation of the problem, that is, to identify the morpho-semantic typological features of the primary structures of the English language, based on the principles and concepts of Natural Linguistics. The novelty of the research is determined by the attempt to make a comprehensive study of the natural morphological structures of the English language and to define typological classification criteria for language modeling.

The theoretical value of the research is the application of the principles and methods of analysis Natural Linguistics to reveal the typological characteristics inherent to the morphological structures of the English language.

The practical significance of the work is provided by the fact that the obtained results can be used for further research in the field of typology of the English language, as well as can find an application in practical courses.

The paper consists of an introduction, four chapters, conclusion, bibliography.

Introduction presents the object of study, the theoretical and methodological framework of the research, its goals and objectives, the topical issues and novelty, the theoretical and practical significance of the research.

Chapter 1 presents the primary principles of natural morphological structures. The English word-forms and the corresponding structures of markedness are defined, and gradual natural methods of classification for those structures are worked out.

Chapter 2 is devoted to analyses of the principles of pedolinguistics which contribute to the study of the natural features of double component lexical units of the English language. As a result of the corresponding analysis both the main forms of realization of these units in child speech and the methods of their grammaticalization in the English language are set.

In Chapter 3 an attempt is made to reveal some morphological structures having iconicity features, based on the study of “natural” approach to language.

Chapter 4 deals with the morpho-semantic typological features of the primary structures of English.

Conclusion presents the main findings of the research in detail.

A handwritten signature in blue ink, appearing to read 'r.P. Zhuravskiy', is located in the lower right quadrant of the page.

